Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությամբ սահմանված 2022թ. միջոցառումների
կատարման ընթացքի վերաբերյալ

	Միջոցառում	**Կատարման ընթացիկ վիճակը**
1	Մշակել գյուղատնտեսական նշանակության հողերի թվայնացված աշխարհագրական քարտեզներ	ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման ծրագրի շրջանակում աշխարհագրատեղեկատվական համակարգերի (GIS) և հեռահար զոնդավորման (RS) միջոցով իրականացվել է չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի (վարելահողեր և բազմամյա տնակարկներ) բացահայտման և քարտեզագրական շերտերի ստեղծման աշխատանքներ: Հողերի գլոբալ գործընկերության (GSP) կողմից ֆինանսավորվող «Հողերի կայուն կառավարման խթանմանը աջակցություն» ծրագրի շրջանակներում թվայնացվել է գոյություն ունեցող հողագիտական քարտեզները, արդյունքում առցանց հարթակում (http://armsis.cas.am) առկա է հանրապետության հողային ռեսուրսների որակական հատկությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, որը պարբերաբար թարմացվում է:
2	Ստեղծել գյուղատնտեսական վարկերի երաշխիքային հիմնադրամ և զարգացնել կարողությունները	Գյուղատնտեսական վարկերի երաշխիքային հիմնադրամ ստեղծելու վերաբերյալ որոշման նախագիծը մշակվել է, սակայն հետագա ընթացքը նպատակահարմար չի համարվել:
3	Ներդնել գյուղատնտեսության ապահովագրության համակարգ	Շարունակվել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում կարկուտ, հրդեհ, գարնանային ցրտահարություն և երաշտ ռիսկերից ապահովագրվում է թվով 13 մշակաբույս՝ ծիրան, խաղող, դեղձ, խնձոր, սալոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, գարի, ցորեն, վարսակ, կարտոֆիլ: 2022թ. ապահովագրվել է 6444 հա հողատարածք, ապահովագրավճարը կազմել է 866.3 մլն դրամ, տրամադրվել է 2167 հատուցում՝ շուրջ 1.3 մլրդ դրամ:
4	Բարելավել սերմերի և տնկանյութերի հավաստագրման համակարգը	«Սերմերի և տնկանյութի մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենքների նախագծերը ներկայացվել են շահագրգիռ պետական մարմիններ 2020թ., որոնց կողմից ներկայացված կարծիքների հիման վրա այն լրամշակվել է և վերոնշյալ օրենքների նախագծերը, ինչպես նաև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը

		ներկայացվել են ՀՀ Վարչապետի աշխատակազմ: 2022թ. սեպտեմբերի 14-ին «Սերմերի և տնկանյութի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Ազգային Ժողովի կողմից: Ներկայումս ընթանում են ենթաօրենսդրական ակտերի մշակումը:
5	Աջակցել թռչնաբուծարանների և անասնապահական տոհմաբուծական տնտե-սությունների հիմնմանը	Տոհմային անասնաբուծության զարգացման նպատակով իրականացվում է աջակցության 2 ծրագիր՝ տավարաբուծության և ոչխարաբուծության ու այծաբուծության զարգացման ծրագրեր: Դրանց շրջանակում մեկնարկից մինչև 2022 թվականի ավարտը ձեռք է բերվել 1815 գլուխ տոհմային ԽԵԿ և 1327 գլուխ տոհմային ՄԵԿ: ՀՀ կառավարության 03.03.2022թ. N 276-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը, որի շահառուներ կարող են հանդիսանալ անասնաբուծության ճյուղում՝ տավարաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության ուղղություններով առնվազն 2,5 մլրդ դրամի ներդրումային ծրագիր իրականացնող ռեզիդենտ իրավաբանական անձինք:
6	Ներդնել HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) ստանդարտը	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի Արժեշղթայի զարգացման բաղադրիչի 5 փուլերի 99 ենթածրագրերից՝ 40-ում իրականացվել է սննդի անվտանգության վերաբերյալ խորհրդատվություն, 47-ում ներդրվել են տարբեր տեսակի սննդի անվտանգության համակարգեր՝ ISO 22000-2005, HACCP, որից 22-ը սերտիֆիկացվել են:
7	Բարելավել կենդանիների առողջության և կենդանիների նույնականացման համակարգերը (օրինակ՝ անասնաբուծության ժամանակակից ազգային ռեգիստր և անասնաբուծության վերահսկման/հետագծելիության հարթակ)	ՀՀ Կառավարության 11.06.2020թ. N 954-Լ որոշմամբ հաստատվել է «ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը: ՀՀ Կառավարության 11.06.2020թ. N 954-Լ որոշմամբ հաստատվել է «ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը: Ծրագրի շրջանակում ս/թ նոյեմբերի 12-ից մեկնարկվել է համարակալման բուն գործընթացը և առ ս/թ դեկտեմբերի 16–ի դրությամբ համարակալվել է շուրջ 125 500 գլուխ խեկ: Մինչև տարեվերջ նախատեսվում է համարակալել և հաշվառել ԽԵԿ-երի շուրջ 30-40 %-ը: Ծրագրի կարևոր բաղադրիչ է հանդիսանում «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային համակարգը, որն ապահովում է տեղեկատվական տվյալների բազայի ստեղծումը և պահպանումը: Էլեկտրոնային կառավարման համակարգի տեխնիկատեղեկատվական և սերվերի սպասարկումները ապահովում են «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային համակարգի գործունեությունը:

8	Մշակել և իրականացնել վարակիչ բրուցելյոզի կանխարգելման և վերացման ծրագրեր	Մշակվում է «Հայաստանի Հանրապետությունում բրուցելոզի վերահսկման, վերացման և կանխարգելման» ծրագրի նախագիծը, սակայն ծրագրի իրականացումը հնարավոր կլինի միայն համարակալման և հաշվառման ծրագրի ավարտից հետո:
9	Ներդնել կաթի, խաղողի և այլ ապրանքների գնագոյացման նոր համակարգ, որը հիմնված կլինի որակական ստանդարտների վրա	Կաթի, խաղողի և այլ ապրանքների գնագոյացման նոր համակարգի ներդրման նպատակով Կորեայի զարգացման հիմնադրամի KAPEX ծրագրի շրջանակներում մշակվել և փոխհամաձայնեցվել են KAPEX ծրագիրը, համատեղ հետազոտության տեխնիկական առաջադրանքը և ստորագրվել են համապատասխան փաստաթղթերը: KAPEX ծրագիրը ամփոփվել է 2022 թվականի մարտին, ինչի հիման վրա Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրում կատարվել են լրացումներ և ներառվել են Խաղողի, Բերքի և Կաթի գնման պայմանագրերի օրինակելի ձևերը, որոնցում նշվել են հումքի գնման տարբերակված գների սահմանման մոտեցումներ, մասնավորապես՝ խաղողի և բերքի գնման դեպքում շաքարայնության և չոր նյութերի պարունակության, իսկ կաթի գնման դեպքում՝ սպիտակուցների, յուղի, բակտերիալ վարակվածության և սոմատիկ բջիջների պարունակության մակարդակով պայմանավորված:
10	Ստեղծել գյուղացիական տնտեսավարողների հաշվառման համակարգ	Էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման» (PHRD) ծրագրով իրականացվել է նախարարության կարիքների ուսումնասիրում և գնահատում, որի հիման վրա կազմվել է գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ճանապարհային քարտեզը: Նախատեսվել էր, որ ֆինանսավորումը պետք է իրականացվի Համաշխարհային բանկի կողմից, սակայն ՀԲ-ի հետ բազմիցս քննարկվել է գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ստեղծման հնարավորությունը (Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների՝ PHRD-ի ծրագրով): Սակայն ՀԲ-ն մերժել է առաջարկը, հիմնավորելով, որ գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ստեղծումը դուրս է Ծրագրի կոնցեպտից:
11	Զարգացնել նախարարության SS և տվյալների վերլուծությանն ուղղված կարողությունները՝ կանոնակարգելու ընթացիկ, ինչպես	Էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման» (PHRD) ծրագրով ստեղծվել է տվյալների 1 շտեմարան՝ տվյալների 13 բազայով: Միջազգային գործընկերների հետ ստեղծվել է էլեկտրոնային հարթակ, որտեղ մի շարք

	նաև ապագայում սպասվող տվյալների բազաների ակտիվները	ուղղություններով ֆերմերները կարողանում են իրականացնել ծախսային հաշվարկներ, ինչը չի պահանջում ֆինանսական գիտելիքներ: Մշակվել և քարտեզագրվել է կաթիլային և անձրևային ոռոգման նորմերը, հավաքագրվել է խաղողի տնկարկների տառաթվային տվյալները ՀՀ 5 մարզերում, ստեղծվել է 5 արժեշղթայի կանխատեսման բիզնես գործիք, որը տեղադրվել է Gaia.am կայքում, առաջիկայում այն կներկայացվի նաև Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում: Նախարարությունում ներդրվել է GIS enterprise ծրագիրը մշտական լիցենզիայով: